

ՓՐԿՉԻ ՀՐԱՇԱՓԱՌ ԵՎ ՍՈՒՐԲ ԾՆՆԴՅԱՆ ՏՈՆԵՐԻ ԱՌԹԻՎ
ԱՄԵՆԱՅՆ ՀԱՅՈՑ ԾԱՅՐԱԳՈՒՅՆ ՊԱՏՐԻԱՐՔ
ԵՎ ԿԱԹՈՂԻԿՈՍ ՆՈՐԻՆ ՍՈՒՐԲ ՕԾՈՒԹՅՈՒՆ
Տ. Տ. ՎԱՋԳԵՆԱ ՀԱՅՐԱՊԵՏԻ
ԵՎ ՔՈՒՅՐ ԵԿԵՂԵՑԻՆԵՐԻ ՀՈԳԵՎՈՐ ՊԵՏԵՐԻ ՄԻՋԵՎ
ՓՈԽԱՆԱԿՎԱԾ ՈՂՋՈՒՅՆԻ ՀԵՌԱԳՐԵՐՆ
ՈՒ ԳՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ

Հռոմեական Կաթոլիկ Եկեղեցու Քահանայապետ Նորին Սրբություն
Տ. Տ. ՊԱՎՂՈՍ Զ ՊԱՊԻՆ (Հռոմ),
Կոստանդնուպոլսո Հունաց Տիեզերական Պատրիարք Նորին Սրբություն
ԱԹԵՆԱԳՈՐԱՍԻՆ (Ստամբուլ),
Մոսկվայի և համայն Ռուսիո Պատրիարք Նորին Սրբություն
ԱԼԵՔՍԻԻՆ (Մոսկվա),
Ալեքսանդրիայի և համայն Աֆրիկայի Պատրիարք Նորին Սրբություն
ՔՐԻՍՏԱՓՈՐ Բ-ին (Ալեքսանդրիա),
Անտիոքի և համայն Արևելքի Պատրիարք Նորին Սրբություն
ԹԵՈԴՈՍԻՈՍ Զ-ին (Դամասկոս),
Երուսաղեմի Հունաց Պատրիարք Նորին Սրբություն
ԲԵՆԵԴԻԿՏՈՍԻՆ (Երուսաղեմ),
Սիրիական Օրթոդոքս Եկեղեցու և համայն Արևելքի Պատրիարք
Նորին Սրբություն ՍԵՎԵՐԻՈՍԻՆ (Դամասկոս),
Համայն Վրաց Պատրիարք-Կաթողիկոս Նորին Սրբություն
ԵՓՐԵՄ Բ-ին ((Թբիլիսի),
Լիբանանի Մարոնիտ Պատրիարք Նորին Սրբություն
ԻԳՆԱՏԻՈՍ ԶԻԱԴԵԻՆ (Բեյրութ),
Քենտրբերիի Արքեպիսկոպոս, համայն Անգլիայի Եպիսկոպոսապետ և Միտրոպոլիտ
Նորին Սրբություն դոկտ. ՄԱՅՔԼ ՌԵՄՋԻԻՆ (Լոնդոն),
Ռումինական Օրթոդոքս Եկեղեցու Պատրիարք Նորին Սրբություն
ՀՈՒՍՏԻՆԻԱՆԻՆ (Բուխարեստ),
Բուլղարական Օրթոդոքս Եկեղեցու Պատրիարք Նորին Սրբություն
ԿՅՈՒՐԵՂԻՆ (Սոֆիա),
Սերբիայի և համայն Հարավսլավիայի Պատրիարք Նորին Սրբություն
ՀԵՐՄԱՆԻՆ (Բելգրադ),
Չեխոսլովակյան Եկեղեցու Պատրիարք Նորին Սրբություն
դոկտ. ՄԻՐՈՍԼԱՎ ՆՈՎԱԿԻՆ (Պրագա),
Աթենքի և համայն Հելլադայի Միտրոպոլիտ Նորին Սրբություն
ԽՐԻՍՈՍՏՈՄՈՍԻՆ (Աթենք),

Կիպրոսի Արքեպիսկոպոս Նորին Սրբություն ՄԱԿԱՐԻՈՍԻՆ (Նիգոսիա),
Էիրոնոպոլի և Արևելյան Աֆրիկայի Միտրոպոլիտ Նորին Սրբություն
ՆԻԿՈԼԱՑՈՍԻՆ (Ալեքսանդրիա),
Ղպտի Ուղղափառ Եկեղեցու Պատրիարք Նորին Սրբություն
Աբունա ԿՑՈՒՐԵՂ Բ-ին (Ալեքսանդրիա),
Համայն Եթովպիայի Պատրիարք Նորին Սրբություն
Աբունա ԲԱՍԻԼԻՈՍԻՆ (Ադդիս-Աբեբա),
Հնդկաստանի և Արևելքի Մալաբար Եկեղեցու Կաթողիկոս Նորին Սրբություն
ԲԱՍԻԼԻՈՍ ԳԵՎԱՐԳԵՍԵ Բ-ին (Կերալա),
Հայ Կաթողիկե Եկեղեցու Պատրիարք Նորին Ամենապատվություն
ԻԳՆԱՏԻՈՍ ՊԵՏՐՈՍ ՊԱԹԱՆՅԱՆԻՆ (Բեյրութ),
Արևմտյան Նյու-Յորքի Եպիսկոպոսական Եկեղեցու Առաջնորդ
ԼՈՒԻՍՏՈՆ ԼԵՎԻՆԳՍՏՈՆ ՍՔԵՑՖ Եպիսկոպոսին
(Նյու-Յորք),
ԱՄՆ-ում Քրիստոսի Եկեղեցիների Ազգային Խորհրդի Նախագահ
Գերարգանապատիվ Հայր Ժ. ԻՐՎԻՆ ՄՅՈՒԼԼԵՐԻՆ (Նյու-Յորք),
Լատվիական ՍՍՌ Ավետարանական-Լութերական Եկեղեցու Արքեպիսկոպոս
Նորին Սրբազնություն ԳՈՒՍՏԱՎ ՏՈՒՐՍԻՆ (Ռիգա),
Էստոնական ՍՍՌ Ավետարանական-Լութերական Եկեղեցու Արքեպիսկոպոս
Նորին Սրբազնություն ՅԱՆ ԿՐՅՎԻՏԻՆ (Տալլին),
Մխիթարյան Ուխտի Աբբահայր Կերհարդեի Հայր ՍՐԱՊԻՈՆ
Վարդապետ ՈՒԼՈՒՀՈՅՅԱՆԻՆ (Վենետիկ),
Մխիթարյան Ուխտի Աբբահայր Կերապայծառ Հայր ՄԵՍՐՈՊ
Վարդապետ ՀԱՊՈՒՅՅԱՆԻՆ (Վիեննա),
Ֆրանչիսկյան Միաբանության Կուստոդ
Հ. ԼԻՆՈՒՍ ԳՈԲԻԵԼԼԻԻՆ (Երուսաղեմ,
Եկեղեցիների համաշխարհային խորհրդի ընդհանուր քարտուղար
դոկտ. ՎԻԼՅԱՄ ՎԻՍՍԵՐ 'Դ ՀՈՒՖՏԻՆ (Ժընև):

«Փառք ի բարձունս Աստուծոյ, և յերկիր խաղաղութիւն, ի մարդիկ հաճութիւն»:

Եղբայրական ջերմ սիրով կմաղթենք Ձեզ քաջառողջություն, երջանիկ հովվապետություն և երկար կյանք, ինչպես նաև Ձեր Ս. Եկեղեցին ու հավատացյալ ժողովուրդին՝ բարօրություն և ծաղկում:

Շնորհավոր Ս. Ծնունդ և երջանիկ նոր տարի Ձեզի:

Եղբայրական սիրով ի Քրիստոս՝

ՎԱՋԳԵՆ Ա
ԾԱՅՐԱԳՈՒՅՆ ՊԱՏՐԻԱՐՔ ԵՎ ԿԱԹՈՂԻԿՈՍ
ԱՄԵՆԱՅՆ ՀԱՅՈՑ

ԷՋՄԻԱԾԻՆ

Հրճվանքով ստացել ենք Ձեր բարեգութ շնորհավորանքները և հայտնում ենք Ձերդ Սրբության սրտագին երախտագիտություն, խնդրելով աստվածային առատ շնորհները Ձեր և համայն Ձեր ժողովրդի վրա:

ՔԱՂԱՔ ՎԱՏԻԿԱՆ ՊԱՊ ՊՈՂՈՍ Ջ

Շատ շնորհակալություն Ձերդ սիրեցյալ Սրբության հեռագրի համար: Շնորհավորություններ Երուսաղեմում ունեցած Ձեր մեծ հաջողությունների համար: Նոր տարում, Աստվածահայտնության տոնի առթիվ, հայցում ենք Ձեզ և սիրելի Հայ Եկեղեցուն աստվածային օրհնություն մարդացյալ Փրկչից:

ՍՏԱՄԲՈՒԼ ԱԹԵՆԱԳՈՐԱՍ ՊԱՏՐԻԱՐՔ

Մեր Տիրոջ՝ Հիսուս Քրիստոսի ծննդյան առթիվ, որը բերեց խաղաղություն երկրին և հաճություն մարդկանց, ողջունում եմ Ձեզ եղբայրական սիրով ի Քրիստոս:

Իր ծնունդով Տերը նորոգեց մարդկանց կյանքը և թո՛ղ լիացնի այն Իր աստվածային լույսով և օրհնի մեզ մեր կյանքի բոլոր օրերին: Նրա ողորմությունը և ուրախությունը թո՛ղ լուսավորեն մեր հոգիները:

Առաջիկա նոր տարին ևս թո՛ղ լինի երջանկության տարի բոլոր ազգերի համար, աստվածային ողորմության տարի բոլորի համար, որոնք հայցում են Նրա երկնային օրհնությունը և օգնությունը:

Ընդունեցե՛ք, Ձերդ Սրբությո՛ւն, մեր եղբայրական համբույրը և անկեղծ մաղթանքները Ձեր սուրբ աշխատանքների հաջողության համար:

Սիրով և հարգանքով՝

ԱԼԵՔՍԻ
Պատրիարք Մոսկվայի և համայն Ռուսաստանի

ՄՈՍԿՎԱ

Սրտանց շնորհակալություն ենք հայտնում Ձեր անկեղծ շնորհավորությունների համար: Աղոթում ենք ջերմորեն Ձեր երջանկության, մեր քույր Եկեղեցու բարգավաճման և աշխարհի խաղաղության համար:

ԹԵՈԴՈՍԻՈՍ ՊԱՏՐԻԱՐՔ

ԴԱՄԱՍԿՈՍ

Ջերմորեն փոխադարձելով Ձերդ Սրբության ողջույնները, սրտագինս մաղթում ենք Ձեզ ուրախ տոն և նոր տարի, լի երկնային օրհնությամբ:

ԲԵՆԵԴԻԿՏՈՍ ՊԱՏՐԻԱՐՔ

ԵՐՈՒՍԱՂԵՄ

Մոտենում է Ս. Ծննդյան գիշերը և մեծ խնդությամբ է լցնում մեր սիրտը՝ վարթեցնելով սուրբ զգացմունքներ: Բեթղեհեմի լույսը որքա՜ն հուսալի զգացմունքներ և խնդություն է պատճառում խավարի մեջ տառապող մարդու հոգու ու սրտի համար:

Իսկ իմաստուն մոգերը, որոնք եկել են այրի մեջ երկրպագելու Փրկչին, որքա՜ն խրատական բաներ ունեն տալու բոլոր ժամանակների և դարերի մարդկության:

Ընդունեցե՛ք, Ձերդ Սրբությո՛ւն, իմ աղոթավոր սրտի խորքից հրգևոր ողջույն՝ Քրիստոսի Ծննդյան և նոր տարվա առթիվ: Ցանկանում եմ Ձեզ, Ձեր բոլոր արքեպիսկոպոսներին, եպիսկոպոսներին, Ձեր բոլոր հոգևոր միաբաններին՝ ամեն տեսակ երկրային և երկնային բարիք և ամենից առաջ՝ խաղաղություն համայն աշխարհին:

Եղբայրական սիրով ի Քրիստոս՝

ԵՓՐԵՄ Բ
Պատրիարք-Կաթողիկոս համայն Վրաց

ԹԲԻԼԻՍԻ

Այս սուրբ օրերին, քրիստոնյա ժողովուրդները ամենուրեք սրտագին ուրախությամբ են տոնում մեր բոլորի Տիրոջ և Փրկչի՝ Հիսուս Քրիստոսի մարդեղությունը: **«Եւ Բանն մարմին եղև և բնակեաց ի մեզ, և տեսաք զփառս Նորա, զփառս իբրև զՄիածնի առ ի Հօրէ, լի շնորհօք և ճշմարտութեամբ»** (Յովհ. Ա 14):

Երբ Աստված Գաբրիել հրեշտակապետի միջոցով հայտնեց Իր նպատակը, Նա գտավ մի հնազանդ պատասխան Իր խոնարհ ձեռակերտի սրտում. **«Եղիցի ինձ ըստ բանի քում»** (Ղուկ. Ա 38): Այս բառերով է, որ Ս. Կույսն ընդունեց Իր բարձր կոչումը՝ լինելու Տիրոջ Մայրը, և դրա համար բոլոր սերունդները Նրան օրհնյալ կոչեցին:

Քրիստոս ծնվեց աղքատության, պարկության և խորին հեզության մեջ: Աստուծո Որդին մերկացել էր Իր բոլոր շքեղությունը և խոնարհել էր՝ բաժանելու մեր մարդկությունը: **«Իջեալ ի յերկնից, մարմնացաւ, մարդացաւ վասն փրկութեան մարդկան»:** Հետևաբար, թո՛ղ քրիստոնյա ժողովուրդները գտնեն իրենց հրճվանքն ու գոհունակությունը Տիրոջ պարզ և խոնարհ ծառայության մեջ: Մենք ծառաներն ենք Աստուծո և մարդկանց:

Ս. Հովհաննես ավետարանիչը մեզ ասում է, որ **«Լոյսն ի խաւարի էր և խաւար ոչ եղև նմա հասու»:** Մենք, որ մկրտված և լուսավորված ենք Ս. Հոգով, այդ լույսը կրում ենք մեր սրտերում: Չնայած աշխարհում մեր շուրջ գտնվող խավարին, մենք հրճվում ենք: Մեր սրտերից և մեր շրթներից անդադար բարձրանում է սուրբ հրեշտակների օրհներգը. **«Փառք ի բարձունս Աստուծոյ և յերկիր խաղաղութիւն, ի մարդիկ հաճութիւն»** (Ղուկ. Բ 14):

Եղբայրական սիրով և ողջունիվ, Ձեզ սիրող եղբայր ի Քրիստոս՝

ՄԱՑԵԼ

Արքեպիսկոպոս Քենտրբերիի,
Եպիսկոպոսապետ և Միտրոպոլիտ համայն Անգլիո

ԼՈՆԴՈՆ

Եղբայրական սիրով շնորհավորում ենք Ձեզ իմ և Բուլղար Ուղղափառ Եկեղեցու Ս. Սինոդի անունից, Քրիստոսի Ս. Ծննդյան տոնի առթիվ:

Մեր Փրկչի ծնունդը եղավ ծագումն «Արդարության Արեգակի»-ի: Թո՛ղ աշխարհը ճանաչի Նրա խոսքերով աստվածային փրկության ճշմարտության և ողորմության ուղին:

Ծնրադիր աղոթելով, ջերմորեն հայցում ենք մանկացյալ Տիրոջ, որ պարգևի մարդկության խոստացված խաղաղությունը և բարի կամեցողությունը: Թո՛ղ երկրի վրա հաստատվի Աստուծո խաղաղությունը և ճշմարտությունը:

Ջերմորեն աղոթում ենք նաև Նրան, որ օրհնի Ձերդ Սրբությունն ու Ձեր հայրենիքը առաջիկա 1964 թվականին, և Իր անբավ ողորմությամբ թո՛ղ մարդկությանը տա խաղաղություն և ամրապնդի բարի կամեցողությունը ժողովուրդների հարաբերությունների մեջ:

Հանձնելով ինձ Ձերդ Սրբության աղոթքներին, մնում ենք Ձերդ Սրբության եղբայր և ծառայակից, սիրով ի Քրիստոս՝

ԿՅՈՒՐԵՂ

Ս. Սինոդի նախագահ,
Պատրիարք Բուլղարիայի

ՍՈՖԻԱ

Եղբայրական ողջույններ, ջերմագին մաղթանքներ Ձեզ և լավագույն հաջողություն Ձեր Եկեղեցու համար՝ Ս. Ծննդյան և նոր տարվա առթիվ:

ԻԳՆԱՏԻՈՍ

Պատրիարք Սիրիական Ուղղափառ Եկեղեցու

ԴԱՄԱՍԿՈՍ

Մարդացյալ Քրիստոսի սիրով մեր շնորհակալությունն ենք հայտնում Ձեր մաղթանքների համար և ի բոլոր սրտե ցանկանում ենք Ձերդ Սրբության, Ձեր հոգևորականության և Հայ Եկեղեցու հավատացյալ ժողովուրդին հոգևոր ուրախություններ, խաղաղություն և Տիրոջ ողորմությամբ երջանիկ հաջողություններ 1964 նոր տարվա ընթացքում:

ՀՈՒՍՏԻՆԻԱՆ

Պատրիարք Ռումինիայի

ԲՈՒԽԱՐԵՍՏ

«Քրիստոս ծնաւ և յայտնեցաւ»:

Բեթղեհեմի Մանուկն Իր ծնունդով աշխարհին պարգևեց ուրախություն և մարդկանց հաճություն, խաղաղություն և սեր, այլ նաև Իր փառավոր ծնունդով բացավ երկնային դռները Աստուծո որդիների առաջ:

Շնորհավորելով Ձեզ Քրիստոսի Ծնունդը, աղոթագին ցանկանում ենք Ձերդ Սրբության հաջողություններ Ձեր հովվապետական գործունեության ասպարեզում: Նաև շնորհավորում ենք նոր տարին, ցանկանալով խաղաղություն համայն աշխարհին:

Մեր Տեր Հիսուս Քրիստոսի բարեհաճությունը թո՛ղ մշտապես անպակաս լինի Ձերդ Սրբության, Ձեր միաբանության և Հայ Եկեղեցու հավատացյալ ժողովրդի վրայից:

Հանձնելով մեզ և մեր հոգևոր դասուն Ձեր բարի աղոթքներին, մնամք Ձերդ Սրբության պաշտոնակից և ի Քրիստոս եղբայր՝

ՀԵՐՄԱՆ

ԲԵԼԳՐԱԴ — Պատրիարք համայն Սերբիայի

Ամբողջ սրտով շնորհակալություն եմ հայտնում Ձեզ Ձեր ուղարկած Ծննդյան բարեմաղթությունների համար: Թույլ տվեք փոխադարձաբար ցանկանալ Ձերդ Սրբության, Ձեր բոլոր հոգևորականներին և ժողովրդին, Չեխոսլովակիայի Ազգային Եկեղեցու անունից, նոր հաջողություններ, որպեսզի Բեթղեհեմի լույսը և ուրախությունը ուղեկցեն և զորացնեն Ձեզ Ձեր սրբազան առաքելության ճանապարհի վրա, ի փառս և ի ծաղկումն Քրիստոնեական Եկեղեցու: Թո՛ղ 1964 տարին մեր եկեղեցիների համագործակցության և եղբայրության բեղմնավոր տարի լինի:

Ի Քրիստոս սիրով Ձերդ Սրբության նվիրված՝

ՆՈՎԱԿ

ՊՐԱԳԱ — Չեխոսլովակյան Եկեղեցու արքեպիսկոպոս

Հրեշտակների բազմության գոհության և փառաբանության ավետումը, որ ծնավ մեզ այսօր Փրկիչ, որ է օծյալ Տեր ի քաղաքի Դավթի, մենք ևս ցնծությամբ ավետում ենք, մեր ուրախությունը հայտնելով Ձերդ Ս. Օծության, և հայցում ենք մարդացյալ Տիրոջ օրհնությունն ու խաղաղությունը Ձեր Եկեղեցու և ժողովրդի վրա և եղբայրաբար ողջունում ենք Ձեզ:

Ձեզ սիրող եղբայր ի Քրիստոս՝

ԽՐԻՍՈՍՏՈՄՈՍ

ԱԹԵՆՔ — Աթենքի Միտրոպոլիտ

Արարիչն ամենեցուն ծնավ անարատ Ս. Կույսից և մարդու կերպարանք առավ, որ փրկի աշխարհը սկզբնական մեղքից:

Ողջ տիեզերքը՝ երախտագետ, երկնային բանակների հետ միասին, ուրախանում է և հրճվում ու երգում աստվածային նոր օրհներգը՝ **«Փառք ի բարձունս Աստուծոյ, և յերկիր խաղաղութիւն, ի մարդիկ հաճութիւն»:**

Մենք ևս, ամբողջ աշխարհի հետ միասին հրճվելով, հրեշտակների հետ փառաբանում, հովիվների հետ ավետում և մոգերի հետ երկրպագում ենք մարդացյալ մեր Աստծուն և ողջունում ենք Ձերդ Ս. Օծությանը, հայցելով Փրկչի մարդասիրությունն ու հովանավորությունը, որպեսզի երկար տարիներ արժանացնի Ձեզ տոնելու այս սուրբ տոնը՝ ի բարօրություն Հայաստանյայց Ս. Եկեղեցու:

Շնորհելով Ձեզ Քրիստոսի սուրբ և եղբայրական համբույրը, մնամք Ձերդ Սրբության սիրալիր եղբայրն ի Քրիստոս՝

ՄԱԿԱՐԻՈՍ

ՆԻԳՈՋԻԱ — Կիպրոսի Միտրոպոլիտ

Ձերդ Սրբության հղում ենք մեր խորին շնորհակալությունները, Ծննդյան առթիվ ուղարկած Ձեր լավագույն մաղթանքների համար:

Աղոթում ենք մեր Տիրոջ, որպեսզի շնորհի Ձեզ քաջառողջություն, օրհնի Ձեր Եկեղեցին և բոլոր հայերին:

ԱԲՈՒՆԱ ԲԱՍԻԼԻՈՍ
Եթովպիայի Պատրիարք

ԱԴԴԻՍ-ԱԲԵԲԱ

Երախտապարտ հոգվով Ձեր ազնիվ շնորհավորական հեռագրին համար կխնդրեմ ընդունեցեք ամանորի, Ծննդյան, Հայտնության սրտագին մաղթանքներս: Աղոթող եմ, որ Աստված շնորհե Ձեզի բարօրություն, գործոց հաջողություն, հայ ազգին երջանկություն, խաղաղություն, կատարյալ միություն:

Եղբայրական սիրո հարգալիր ողջույններով՝

ԻԳՆԱՏԻՈՍ-ՊԵՏՐՈՍ ՊԱԹԱՆՅԱՆ
Կաթողիկոս-Պատրիարք կաթողիկե հայոց

ԲԵՅՐՈՒԹ

Այս օրերին, երբ քրիստոնյա ողջ աշխարհը տոնում է մեր Տիրոջ և Փրկչի՝ Հիսուս Քրիստոսի Ծնունդը՝ Աստուծո նվերը մեզ, շնորհքի մեր միջոցը և փառքի մեր հույսը, Եպիսկոպոսական Եկեղեցու կողմից եղբայրական սիրով ողջունում ենք Ձերդ Սրբությանը:

Մեր Փրկչի հրաշափառ ծննդյամբ, Հայրն Աստված հայտնում է մեզ Իր կամքը մարդկանց համար, որ լինեն մեկ Քրիստոսով և Նրա Եկեղեցիով, Ս. Հոգու առաջնորդությամբ:

Աղոթում ենք երկրի վրա խաղաղության հաստատման և մարդկանց միջև միության իրագործման համար, որը համաձայն է Աստուծո կամքին:

Մեր լավագույն մաղթանքները Ձերդ Սրբության գործերի հաջողության և Ձեր մեծ Եկեղեցու և ժողովրդի բարօրության համար:

Մնում ենք Ձեզ սիրող եղբայր ի Քրիստոս՝

ԼՈՐԻՍՏՈՆ ԼԵՎԻՆԳՍՏՈՆ ՍՔԵՅՖ
նախագահ Ուղղափառ և Հին Կաթոլիկ
Եպիսկոպոս Արևմտյան Նյու-Յորքի,
եկեղեցիների միայլ հանձնաժողովի

ՆՅՈՒ-ՅՈՐՔ

Հանուն Ամերիկայի Միացյալ Նահանգների Քրիստոնեական եկեղեցիների ազգային խորհրդի, սիրով ընդունում ենք Ձեր ուղերձը և եղբայրական ոգով փոխադարձում ենք Ձեր շնորհավորանքները, աղոթելով, որ Տերն ավելացնի Իր փառքը մեր երկու երկրներում և համայն աշխարհում:

ԻՐՎԻՆ ՄՅՈՒԼԼԵՐ
Եպիսկոպոս, նախագահ ԱՄՆ-ի
Քրիստոնեական եկեղեցիների
ազգային խորհրդի

ՆՅՈՒ-ՅՈՐՔ

Հաճեցեք ընդունել իմ սրտագին շնորհավորանքները Քրիստոսի Ծննդյան օրհնյալ տոնի և ամանորի առթիվ: Թո՛ղ Բեթղեհեմի ճաճանչափայլ աստղի լույսը պայծառացնի Ձեր հնադարյան Եկեղեցին և շնորհալի, աշխատասեր հայ ժողովրդին, սուրբգրական Արարատի հովանու ներքո:

ԳՈՒՍՏԱՎ ՏՈՒՐՍ
Լատվիայի Ավետարանական-Լութերական
Եկեղեցու արքեպիսկոպոս

ՌԻԳԱ

Քրիստոնեության մեծագույն տոնին, երբ համայն աշխարհի քրիստոնյաները փառաբանում են Աստվածորդու ծնունդը, հոգևոր մեծ ուրախության զգացմունքով ողջունում եմ Ձերդ Սրբության:

Ցանկանում եմ Տիրոջ օրհնությունը նոր՝ 1964 տարվա առթիվ:

Մշտապես Ձեզ հարգող՝

ՅԱՆ ԿԻՅՎԻՏ
Էստոնիայի Ավետարանական-Լութերական
Եկեղեցու արքեպիսկոպոս

ՏԱԼԼԻՆ

Վեհափա՛ռ Տեր.

Խաղաղության ավետաբեր հրեշտակներուն հետ հասավ Ս. Էջմիածնեն Ձերդ Վեհափառության շնորհավորական գիրը, հոգեկան անպատմելի ուրախությամբ համակելով բոլորիս սրտերը, Քրիստոսի Ս. Ծննդյան պատգամները վերարծարծելով ցնծագին:

Խաղաղության և ակնկալություններու այս արշալույսին, ուրեմն, 1964-ի սեմին, ընդունեցեք, Վեհափա՛ռ Տեր, միաբանությանս և իմ սիրո ողջույնը Ս. Ղապարեն, Ձերդ թանկագին կենաց արևշատության և երջանկության ջերմ շնորհավորություններով կեղուն:

Մեր անկեղծ ու եղբայրական մաղթանքները նաև Ս. Էջմիածնի միաբան բոլոր վարդապետներուն, լուսաշող ապագայի մը աստղերով կայծկլտուն:

Հայցելով Ձեր հայրապետական աղոթքները բովանդակ միաբանությանս համար, ամենախոնարհ մեծարանքով մնամ Ձերդ Վեհափառության աղոթակից՝

Հ. ՍՐԱՊԻՈՆ Վ. ՈՒԼՈՒՀՈՃՅԱՆ
Ընդհանուր աբբա Մխիթարյան միաբանության,
Արքեպիսկոպոս Քերսոնի

ՎԵՆԵՏԻԿ

Կհայտնեմ խորին շնորհակալությունս Վեհափառ Տյառնդ, Ս. Ծնունդի և ամամանորի առթիվ ինձի և համօրեն ուխտիս ուղղած սրտաբուխ մաղթանքներու համար:

Ձայնակից Ձեզի, մանկացյալ Բանին մսուրին առջև, ես և ուխտիս բոլոր միաբանները, կհայցենք աշխարհիս խաղաղություն:

«Յերկիր խաղաղութիւն» ավետող երկնային պատգամավորներու հետ փառք կուտանք ու գոհություն կմատուցանենք ի սրտե Բարձրելույն ու կաղոթենք, որ համայն մարդկությունը զգա պարտքը լսելու «Խաղաղության Իշխան»-ին պատգամը, որ լսելի եղավ Իր ծնունդի առթիվ և զոր, այդ խաղաղության պատգամը, Իր կյանքի վերջին ժամերուն իսկ կտակ թողուց Իր աշակերտներուն:

Իցի՛վ թե աղքատիկ մսուրի մեջ հանգչող ամենակարող Մանուկը հաճեր լսել ամբողջ մարդկության պաղատագին աղոթքները և սերն ու համերաշխությունը տիրեր ամենուրեք:

Այս զգացումներով, կմաղթենք շնորհավոր Ս. Ծնունդ և նոր տարի, կհայցենք ի Տյառնե Վեհափառ Հայրապետիդ երկար, արդյունավոր տարիներու շարք մը:

Վեհափառ Տյառնդ աղոթակից՝

Հ. ՄԵՍՐՈՊ ՀԱՊՈՋՅԱՆ
Արքեպիսկոպոս և ընդհանուր աբբա

ՎԻԵՆՆԱ

Խորին շնորհակալություն Ձեր մաղթանքների համար: Շնորհավոր Ս. Ծնունդ և երջանիկ նոր տարի Ձեզի, Ձեր Ս. Եկեղեցուն և Ձեր հավատացյալ ժողովրդին: Երջանկություն և արևշատություն բոլորին:

Ձերդ ի Քրիստոս՝

Հ. ԼԻՆՈՒՍ ԳՈԲԻԵԼԼԻ
Ս. Երկրի Ֆրանչիսկյան կուստոդ

ԵՐՈՒՍԱՂԵՄ

ՀԱՅԿԱԿԱՆ ԳՐԱԴԱՐԱՆ ԱԿԱԴԵՄԻԱ

Թո՛ղ Ս. Ծնունդը բերի Քրիստոսի օրհնությունը, խաղաղությունը և ուրախությունը Ձեր Եկեղեցուն:

ՎԻՍՍԵՐ ԴՀՈՒՖՏ
Եկեղեցիների համաշխարհային խորհրդի
ընդհանուր քարտուղար

ԺԸՆԵՎ

Նոր տարվա առթիվ շնորհավորում ենք Ձեզ և մեր հայ եղբայրներին: Մաղթում ենք առողջություն, երջանիկ կյանք և նոր հաջողություններ՝ խաղաղության համար մղվող պայքարի գործում:

Շեյխուլիսլամ ՀԱԲԻՄՋԱԴԵ
Մուֆտի ՎԱԼԻՋԱԴԵ

ԲԱՔՈՒ

Փրկչի հրաշափառ և Ս. Ծննդյան տոնի առթիվ շնորհավորական հեռագրեր են ստացվել նաև քույր եկեղեցիների հետևյալ հոգևորականներից.

Կարդինալ Օգոստինոս Բեա (Վատիկան),
Եպիսկոպոս Վալերիան, (Օրադեա, Ռումինիա),
Միտրոպոլիտ Նիկոդիմ (Մոսկվա),
Միտրոպոլիտ Պիմեն (Մոսկվա),
Միտրոպոլիտ Նիկոդիմ (Սլիվեն, Բուլղարիա),
Արքեպիսկոպոս Կիպրիան,
Եպիսկոպոս Ալեքսի (Մոսկվա),
Եպիսկոպոս Զինովի (Թբիլիսի),
Եպիսկոպոս Իլյա (Բաթումի),
Եպիսկոպոս Միքայել (Ստավրոպոլ),
Հ. Ջոն Սատերդուեյտ (Լամբեթ պալատ, Լոնդոն),
Հ. Դավիթ Տեստին (Լամբեթ պալատ, Լոնդոն),
Հ. Բերնարդ Բարոն (Լամբեթ պալատ, Լոնդոն),
Հ. Պոլ Վերգեկե (Ժընև),
Վանահայր Քուտբերտ Ֆիրոն (Նաշդոմ վանք, Բերնհամ),
Վանահայր Շեվետոնյը վանքի (Բելգիա),
Ռոբերտ Մաքդոնալդ (Ֆիլադելֆիայի Ավետարանական Եպիսկոպոսական Եկեղեցու ռեկտոր),
Վարդապետ Պիմեն (Մոսկվա),
Քահանա Ռուժիցկի (Զագորսք),
Քահանա Սերաֆիմ (Օրջոնիկիձե),
Քահանա Քրիստոֆեր Կլասոն (Շվեդիա):